| ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ | | | |
|---|---|---|---|
| ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌՈՒՄ | | | |
| **1.** Համընդհանուր ներառում – **10** ժամ, **1** կրեդիտ | | | |
| Թեմա | Հատկացվող ժամաքանակը | Բովանդակությունը | Աշխատանքը |
| Թեմա **1.**<br>Ներառական կրթության փաստահենք ընկալում:<br>Ներառական կրթության իրավական կարգավորումներ: | 1 ժամ | Ներառական կրթությունը <<Մխիթար Սեբաստացի>>կրթահամալիրում .<br>նկարագրությունը, առանձնահատկությունները, կազմակերպումը<br><br>Ուսումնասիրության նյութեր<br><br>✔ ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին<br>✔ Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին<br>✔ «Հանրակրթության մասին» հայաստանի հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին | Ծանոթանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքով սովորողի ուսուցման կազմակերպման կարգին, գրել նկատառումներ<br>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքով սովորողի ուսուցման կազմակերպման կարգ<br><br>Կարդալ նշված հոդվածները, մեթոդական մշակումները:<br>Դրանցից մեկը գրախոսել:<br>«Ներառական կրթության բարելավումը կրթահամալիրում» Աննա Գանջալյան<br>«Ներառական կրթություն» Ազնիվ Գալստյան<br>«Չկա ներառականություն, չկա մանկավարժություն» Մարիետ Սիմոնյան |

| | | | |
|---|---|---|---|
| | | ✔ ՀՀ-ում ներառական կրթության իրականացման, գնահատում, 2013 թվական | |
| Թեմա 2.<br>Երեխաների կրթական կարիքների բազմազանությունը: Սովորողների կրթական կարիքների բացահայտում և գնահատում: | 2 ժամ | Սովորողներ կրթական կարիքները, բազմազանության տեսակները, հաճախ հանդիպող կրթական կարիքների առանձնահատկությունները:<br><br>Ուսումնասիրության նյութեր<br>Ներառական կրթությունը գործնականում (ուսումնամեթոդական ձեռնարկ) Հեղինակ՝ Սյուզաննա Պետրոսյան<br>Թեմային առնչվող նյութեր<br>(նյութեր, տեսանյութեր, գործնական խորհուրդներ) | Ծանոթանալ, կարողանալ բացահայտել և ճանաչել երեխաների կրթական կարիքների բազմազանությունը: Կարողանալ տարբերել կրթական կրիքները: Քննարկել առանձին դեպքեր:<br><br>Խոսքի զարգացում նկարի միջոցով, Աննա Օհանյան<br>Նոթբուքը որպես խոսքի զարգացման միջոց աուտիզմով սովորողների համար, Աննա Օհանյան |
| Թեմա 3.<br>Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներ: | 2 ժամ | Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ<br><br>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում (մեթոդական ուղեցույց ձեռնարկ)<br><br>Դպրոցական մակարդակի գնահատման թերթիկարդյունքների գրանցման թերթիկ | Ծանոթանալ Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգին, ըստ առաջնայնության դուրս բերել հինգ դրույթներ և հիմանվորել կարևորությունը: Անել կարգին ուղղված առաջարկներ:<br><br>Ծանթռանալ Դպրոցական մակարդակի գնահատման գործիքակազմին, կատարել մեկ գործնական աշխատանք՝ կարիքի գնահատում: |
| Թեմա 4.<br>Ներառող դասավանդում. | 1 ժամ | Սովորողների ուսումնառություն ոճերը և ռազմավարությունները: Ուսումնառության | Ծանոթանալ ներառող դասավանդման հիմանկան սկզբունքներին, այդ թվում համատեղ դասավանդման մոդելներին, ուսումնառության համընդհանուր ձևավորմանը, |

| | | | |
|---|---|---|---|
| Ռազմավարություններ, մեթոդներ, մոտեցումներ, | | հանրնդհանուր ձևավորում (ՈւՀՁ), ներառող դասավանդում:<br><br>Ուսումնասիրության նյութեր<br>Ներառական կրթության ռազմավարություններ (դասագիրք)<br><br>Ուսումնառության հանրնդհանուր ձևավորում (ՈւՀՁ), տեսանյութեր, Մանուկ Խաչատրյան<br><br>Ուսուցման համրնդհանուր ձևավորում, տեսանյութ, Արմինե Ավագյան, Վերգինե Եսայան<br>Համատեղ դասավանդման մոդելներ, | սովորողների ռազմավարություններ, ուսումնկան ոճերին մեթոդներին, մոտեցումներին: Կազմակերպել քննարկում: Համատեղ դասավանդման մոդելների մասին գրել հինգական նկատառումներ՝ առավելությունները և թերությունները:<br><br>Ուսումնասիրել հետևյալ երկու հոդվածները, գրախոսել դրանիցից մեկը:<br><br>Ինչպես են տեխնիկական միջոցները փոխում հատուկ կարիքով սովորողների համար կրթությունը, Աննա Օհանյան<br><br>«Միասին» նախագիծը՝ որպես համագործակցության արդյունավետ ձև, Արևիկ Բաբայան |
| Թեմա 5.<br>Կրթական ծրագրերի հարմարեցումներ, տարբերակված ուսուցում, անհատական ուսուցման պլանավորում | 1 ժամ | Կրթահան ծրագրերի հարմարեցումները, առանձնահատկությունները <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրում<br><br>Ուսումնասիրության նյութեր<br>Անհատական ուսուցման պլան (ԱՈւՊ), ուսուցման պլանավորում՝ օրինակելի ձև և կրթահամալիրային առանձնահատկություններ<br><br>Համատեղ դասավանդում Ուսուցման կենտրոնների տեղափոխման մոդել, տեսանյութ<br><br>Հեռավար ուսուցումը՝ որպես կրթահամալիրի ձեռքբերում, Վարդան Կարապետյան<br>Ներառականությունը՝ կենսական արժեք, Ռիմա Երեմյան | Ծանոթանալ <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրում գործող կրթական ծրագրերայինի հարմարեցումներին (առկա,հեռակա, հռավար, անհատական դասացուցակով աշխատանք) առանձնահատկություններին:<br>Անհատական ուսուցման պլան (ԱՈւՊ կրաթահամալիրում կիրառվող), ուսուցման պլանավորում (օրինակելի ձև և կրթահամալիրում կրականացվող հմրնդհանուր ներառական կրթությունից բխող առանձնահատկություններ):<br><br>Գրել ԱՈւՊ-ին վերբերվող հինգ նկատառում: |

| | | | |
|---|---|---|---|
| | | Շփումը կենդանիների հետ՝ որպես ներառական կրթություն, Ռիմա Երեմյան<br>Չկա ներառականություն, չկա մանկավարժություն, Մարիետ Սիմոնյան<br>Չկորցնել հին ներդաշնակությունը նոր առօրյայում, Մարինեա Գևորգյան | |
| Թեմա 6. Համագործակցությունն ու փոխհարաբերությունները ներառական կրթության համատեքստում | 2ժամ | Սովորող-սովորեցնող նախագիծ<br>Ուսումնական ճամփորդություններ<br>Ուսումնական ճամբարներ<br>Խմբային աշխատանքներ<br>Համագործակցային նախագծեր<br>Ընտանեկան նախագծեր<br><br>Ուսումնասիրության նյութեր<br><br>Ուսումնական ճամբարի կազմակերպման կարգ<br>Ամառային ստեղծագործական բաց ճամբարի կազմակերպման կարգ | 1. Կարդալ նշված հոդվածները, մեթոդական մշակումները: Դրանցից մեկը գրախոսել:<br><br>Երբ դասարանում ուսումնական հատուկ կարիքով երեխաներ կան — թարգմանություն անգլերենից՝ Ցուրա Գանջալյան<br>Անհրաժեշտ պայմաններ և հարմարեցված միջավայր յուրաքանչյուր սովորողի համար Քնարիկ Ներսիսյան |
| Թեմա 7.<br>Իրավիճակների լուծումներ (ինքնուրույն աշխատանք) | 1 ժամ | Ուսումնական նյութեր, ուսումնական նյութերին ներկայացվող պահանջներ<br>Ինքնակրթություն<br><br>Ուսումնասիրության նյութեր<br>Ուսումնական նյութերի փաթեթ— դասավանդող՝ Մարիետ Սիմոնյան<br>Քնարիկ Ներսիսյանի ուսումնական փաթեթը<br>Երաժշտությամբ ուսուցումը՝ համընդհանուր ներառականության օրինակ— դասավանդող՝ Համիկ Մաթևոսյան<br>Համընդհանուր ներառականություն. լեզվական խոչընդոտներ -դասավանդող՝ Համիկ Թոփչյան | Շրջված դասարանի մեթոդով ծանոթանալ մոդուլի <<Բովանդակություն>> բաժնում նշված նյութերին, կազմակերպել քննարկում: |

| | | | |
|---|---|---|---|
| | | Յուրաքանչյուր սովորողի կրթական պահանջմունքը— դասավանդող՝ Համիկ Ղազարյան<br>Ներառականություն, դժվարություններ, անհատին ուղղված աշխատանք —դասավանդող՝ Տաթև Աբրահամյան<br>Անհատական ուսուցման առաջադրանքների փաթեթ– դասավանդող՝ Մարգարիտա Հովնանյան | |

Վերջնարդյունքները

1) Ուսուցիչը կկարողանա՝

ա) մեկնաբանել ներառական կրթության կարևորությունը մարդու իրավունքների տեսանկյունից,

բ) թվարկել ներառական կրթության դրական կողմերը և հիմնական սկզբունքները, գ) ներկայացնել ներառական կրթության համատեքստում ընդունելի բառապաշարը, դ) թվարկել ներառական կրթության կազմակերպումը կարգավորող իրավական ակտերի հիմնական դրույթները,

ե) ընդունել և արժևորել սովորողների բազմազանությունը,

զ) համարել սովորողների տարբերությունը որպես ռեսուրս և արժեք,

է) թվարկել ներառական կրթության համատեքստում հաճախ հանդիպող բազմազանության տեսակները,

ը) ճանաչել հաճախ հանդիպող կրթական կարիքների առանձնահատկությունները, թ) բացահայտել և ճանաչել սովորողների կրթական կարիքները,

ժ) վերհանել կրթության գործընթացում երեխայի լիարժեք մասնակցության սահմանափակումները և դրանց հաղթահարմանը խթանող գործոնները,
ի) կիրառել դպրոցական մակարդակի գնահատման գործիքակազմը,

իա) ներկայացնել «ՀՀ–ում կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման եռաստիճան համակարգը,

իբ) տարբերակել դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներում կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացները,

իգ) սահմանել երեխային, ծնողին, մանկավարժին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակները,

իդ) ճանաչել սովորողների ուսումնառության ոճերը և կիրառել համապատասխան ռազմավարություններ,

իե) ընտրել ու կիրառել դասավանդման համապատասխան մեթոդներ և ռազմավարություններ՝ ելնելով սովորողների կրթական կարիքներից ու առանձնահատկություններից,

իզ) կիրառել դասավանդման Ուսումնառության համընդհանուր ձևավորման մոտեցումները,

իէ) կիրառել սովորողների ներգրավման բազմազանության ձևեր,

իը) պլանավորել դասն այնպես, որ բոլոր սովորողները դասի տարբեր փուլերում մասնակցություն ունենան,

իթ) իրականացնել համատեղ դասավանդում,

իժ) թվարկել համատեղ դասավանդման մոդելները, բաղադրիչները, ինչպես նաև ներկայացնել արդյունավետ համատեղ դասավանդման քայլերը,

իլ) սահմանել Անհատական ուսուցման պլան հասկացությունը (այսուհետ՝ ԱՈւՊ),

լա) նկարագրել, թե ինչպիսի հարմարեցումներ են անհրաժեշտ կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման գործընթացը արդյունավետ

կազմակերպելու համար,

լբ) կատարել հանրակրթական առարկայական ծրագրերի հարմարեցումներ ըստ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի,

լգ) նկարագրել սովորողի ԱՈՒ-Պ-ի մշակման գործընթացի հիմնական քայլերը,

լդ) սահմանել երեխայի անհատական կրթական նպատակներ,

լե) մեկնաբանել ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցության կարևորությունը,

լզ) նշել կրթության գործընթացի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասնակիցների համագործակցության շրջանակը,

լէ) թվարկել ուսուցիչների աջակցող մասնագետների, ընտանիքների անդամների ու երեխայի կրթության հետ առնչվող այլ շահառուների հետ՝ երեխաների արդյունավետ ուսումնառության խոչընդոտները հաղթահարելու համագործակցության ուղիներ,

լը) ներկայացնել ընտանիքին երեխայի ուսումնառության հարցերում ակտիվ ներգրավելու ռազմավարություններ:

## Հետազոտական աշխատանքի թեմաներ

1. Համընհանուր ներառականության սեփական փորձի ներկայացում, այդ թվում օրինակելի դասի տեսաձայնագրություն
2. Կրթական կարիքների ուսումնասիրություն, որևէ կրթական կարիքին մանրամասն անդրադարձ, այդ թվում նաև գործնական աշխատանքի ներկայացում, տեսանյութեր, նյութեր
3. Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորություն
4. Դպրոցական մակարդակի գնահատման անհրաժեշտությունն ու կարևորությունը
5. Թիմային աշխատանք, համատեղ դասավանդում
6. ԿԱՊԿՈւ սովորողի անհատական թղթապանակ
7. Համընդհանուր ներառականության առավելություններն ու թերությունները
8. Համըդհանուր ներառականությունը և մեր օրերի կրթական համակարգ
9. Ներառականության մասնագետ- սովորող- ծնող- դասավանդող համագործակցության կարևորությունը համընդհինուր ներառականության կոնտեքստում

Կազմեցին Լուսինե Ալեքսանյանը, Նելլի Թովմասյանը